

**ԿԱՐԾԻՔ**  
**ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ**

ՄԻՔԱՅԵԼ ԷՌԵՍՏԻ ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ «ԲՆԱԿԱՆ ՄԵՆԱՇՆՈՐՀԻ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ» ԹԵՄԱՅՈՎ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ՝ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ Ը.00.02 - «ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ, ՆՐԱ ՈԼՈՐՏՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԹԵԿՆԱԾՈՒԻ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՅՑՄԱՆ ՀԱՄԱՐ

**Ատենախոսության թեմայի արդիականությունը:**

Ցանկացած երկրի, այդ թվում նաև Հայաստանի Հանրապետության տնտեսության տարբեր հատվածների, ինչպես նաև սոցիալ-տնտեսական զարգացման տեմպերի վրա ազդում են բազմաթիվ գործոններ, որոնց մեջ ամենաազդեցիկներից մեկը հանդիսանում է բնական մենաշնորհների թողարկած արտադրանքների և մատուցած ծառայությունների գնագոյացման, ինչպես նաև ոլորտի պետական կարգավորման կառուցակարգերն ու մոտեցումները: Այդ իմաստով չափազանց կարևոր է, որպեսզի նշված հարցերը կարևորվեն, ինչպես պետական քաղաքականության առանցքային ուղղություններում, այնպես էլ գիտական հետազոտության շրջանակներում:

Շուկայական տնտեսության պայմաններում, երբ ՀՀ-ում զգալիորեն կրճատվեցին արտադրության ծավալները, կրճատվեց նաև բնական մենաշնորհի արտադրանքի նկատմամբ պահանջարկը, արդյունքում նաև՝ թողարկվող արտադրանքի (մատուցվող ծառայության) ծավալները: Նշված հանգամանքը լրջորեն խոչընդոտեց ոչ միայն բնական մենաշնորհի գործունեության ապահովման հարցում, այլ նաև տնտեսական համակարգում դրա կարգավորիչ գործառույթների ամրապնդման և ընդլայնման գործում:

Հետազոտության հրատապությունն ընդգծվում է այն հանգամանքով, որ վերջին տարիներին Հայաստանի Հանրապետությունում բավարար չափով ուշադրություն չի դարձվում բնական մենաշնորհի գործունեության կարգավորման խնդիրների

լուծմանը, պատշաճ մոտեցում չի ցուցաբերվում դրա համակողմանի ուսումնասիրությանը և առկա խնդիրների լուծմանը:

Նշված հիմնախնդրի պարզաբանման և գործնական կիրառման կառուցակարգերի մշակման անհրաժեշտությունը և կարևորությունը պայմանավորել են սույն ատենախոսության կառուցվածքը, առաջադրված խնդիրների ուսումնասիրության շրջանակները և խորությունը:

### **Հետազոտության հիմնական նպատակը և խնդիրները:**

Ատենախոսության նպատակն է բնական մենաշնորհների ձեռնարկությունների պետական կարգավորման կառուցակարգերի կատարելագործմամբ Հայաստանի Հանրապետությունում պետության, սպառողի և բնական մենաշնորհի սուբյեկտների շահերի հավասարակշռության ապահովումը:

Սահմանված նպատակին հասնելու համար առաջադրվել և լուծվել են հետևյալ խնդիրները.

- ուսումնասիրել մենաշնորհի և մենաշնորհային շուկայական կառուցվածքի տնտեսական բովանդակությունը, դրանց տեսակները և ձևավորման էվոլյուցիոն գործընթացը,
- բացահայտել բնական մենաշնորհի գործառնությունների իրականացման կառուցակարգերն ու առանձնահատկությունները,
- վերլուծել համաշխարհային տնտեսությունում բնական մենաշնորհի տարածված ձևերը, դրանցից մատնանշել Հայաստանի համար կիրառելի տարբերակները,
- վերհանել և ներկայացնել բնական մենաշնորհի էվոլյուցիոն զարգացումները, ապապետականացման և մասնավորեցման ասպեկտները աշխարհի տարբեր երկրներում, այդ թվում՝ նաև Հայաստանի Հանրապետությունում,
- հիմնավորել ոլորտի պետական կարգավորման անհրաժեշտությունը և սահմանել պետության մասնակցության չափերը բնական մենաշնորհի կարգավորման հարցում,

- ուսումնասիրել և վերլուծել բնական մենաշնորհի պետական կարգավորման մեթոդաբանական ասպեկտները և նախանշել դրանց կիրառման հնարավորությունները Հայաստանի Հանրապետության բնական մենաշնորհների կարգավորման բնագավառում,
- ներկայացնել Հայաստանի Հանրապետության բնական մենաշնորհի պետական կարգավորման ինստիտուցիոնալ վերափոխումները նրա կատարելագործման համատեքստում,
- բացահայտել Հայաստանի Հանրապետության բնական մենաշնորհի պետական կարգավորման ոլորտում առկա հիմնահարցերը,
- մշակել բնական մենաշնորհները կարգավորող պետական մարմնի գործունեության, սակագների հաշվարկման մեթոդոլոգիայի և բնական մենաշնորհի սուբյեկտների կողմից մատուցվող ծառայությունների կատարելագործման, ինչպես նաև ներդրումների ներգրավման խթանիչ գործիքակազմի բարելավման ուղղություններ և կառուցակարգեր:

### **Հետազոտության հիմնական արդյունքները և գիտական նորույթը:**

Ատենախոսության գիտական արդյունքները հիմնված են Հայաստանի Հանրապետությունում բնական մենաշնորհի սուբյեկտների գործունեության և պետական կարգավորման հիմնախնդիրների համալիր ուսումնասիրության վրա, և դրսևորվում են որպես՝ ազգային տնտեսության դինամիկ զարգացման, սակագների հաշվարկման մեթոդոլոգիաների ու ներդրումային քաղաքականության կարգավորման մեթոդական հիմքի մշակման բազա:

Ատենախոսության շրջանակներում ստացված արդյունքներից գիտական նորույթ, մեր գնահատմամբ կարող են հանդիսանալ հետևյալները՝

- պետության ու բնական մենաշնորհի սուբյեկտների փոխգործակցության համակողմանի վերլուծության հիման վրա մշակվել է պետության ու բնական մենաշնորհի սուբյեկտների փոխգործակցության նոր կանոններ և կառուցակարգեր, մասնավորապես՝ բնական մենաշնորհի սուբյեկտի կողմից սակագների բարձրացման հայտը չպետք է զսպվի կարգավորո-



դի կողմից և չպետք է դիտարկվի բնակչության սոցիալական հարցերի լուծման համատեքստում,

- բացահայտվել է բնական մենաշնորհի պետական կառավարման և պետական կարգավորման հիմնախնդիրներն ու հիմնավորվել է, որ պետությունը նույնպես պետք է ունենա կարգավորման սուբյեկտի կարգավիճակ,
- մշակվել է բնական մենաշնորհը կարգավորող պետական անկախ մարմնի ֆինանսավորման և գործունեության վերահսկողության նոր կառուցակարգ,
- մշակվել է բնական մենաշնորհի կարգավորման խթանիչ գործիքակազմ, մասնավորապես սակագների կարգավորման նոր մեթոդաբանություն, ինչն էականորեն կնպաստի բնական մենաշնորհի սուբյեկտի ներդրումների խթանմանն ու գործունեության արդյունավետության մակարդակի բարձրացմանը:

### **Ատենախոսության կառուցվածքը և բովանդակությունը:**

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից և առաջարկություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից:

Ատենախոսության ներածությունում հիմնավորվել է հետազոտության թեմայի արդիականությունը, ներկայացվել են հետազոտության նպատակն ու խնդիրները, հետազոտության օբյեկտը և առարկան, տեսամեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը, գիտական նորույթը և արդյունքները, գործնական նշանակությունը:

**Ատենախոսության առաջին՝ «Բնական մենաշնորհը ազգային տնտեսության համակարգում (տեսամեթոդական հիմքերը)»** գլխում ներկայացվել են մենաշնորհի տնտեսական բովանդակությունը, բնորոշումներն ու տեսակները, բնական մենաշնորհի գործառնություններն ու դրանց իրականացման կառուցակարգերը, ինչպես նաև բնական մենաշնորհների ձևավորումը << ապապետականացման գործըն-

թացի համատեքստում, որտեղ համակողմանիորեն ուսումնասիրվել և վերլուծվել է նաև միջազգային փորձը:

**Ատենախոսության երկրորդ՝ «ՀՀ բնական մենաշնորհի պետական կարգավորումը եվ միջազգային փորձի վերլուծությունը»** գլխում ներկայացվել են բնական մենաշնորհի պետական կարգավորման միջազգային փորձի վերլուծությունը, ներկայացվել և հիմնավորվել է պետության մասնակցության անհրաժեշտությունը և սահմանները բնական մենաշնորհի կարգավորման գործում, ինչպես նաև կատարվել է բնական մենաշնորհների պետական կարգավորման մեթոդաբանության վերլուծություն:

**Ատենախոսության երրորդ՝ «Հայաստանում բնական մենաշնորհի պետական կարգավորման գործընթացի կատարելագործման հիմնախնդիրները»** գլխում ներկայացվել են ինստիտուցիոնալ վերափոխումները Հայաստանի բնական մենաշնորհի կատարելագործման համատեքստում, բնական մենաշնորհի սակագնային քաղաքականության կատարելագործման հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում, ինչպես նաև ներկայացվել է ՀՀ բնական մենաշնորհի պետական կարգավորման կառուցակարգերը սակագնային քաղաքականության կատարելագործման համատեքստում:

Հետազոտության արդյունքում ստացված արդյունքային դրույթներն ամփոփված են ատենախոսության եզրակացություններ բաժնում:

### **Դիտողություններ ատենախոսության վերաբերյալ:**

Աշխատանքում առկա են որոշակի բացթողումներ, որոնք ներկայացվում են ստորև՝

1. Ատենախոսության 1.1՝ «Մենաշնորհի տնտեսական բովանդակությունը, բնորոշումներն ու տեսակները» ենթագլխում հայրենական տնտեսագետների տեսակետներին անդրադարձը բավականին մակերեսային է: Մեր կարծիքով նպատակահարմար կլիներ առավել մանրամասն անդրադառնալ հայրենական գիտնականների ուսումնասիրություններին:

2. Ատենախոսության աղյուսակ 3-ում ներկայացված են Հայաստանի Հանրապետության օտարերկրյա ներդրումների ծավալները 2008-2015թթ. կտրվածքով: Մեր կարծիքով ատենախոսության տվյալ հատվածի վերլուծության արդյունքներն ավելի համակողմանի և հիմնավոր կլինեին, եթե աղյուսակում ներկայացված լինեին և վերլուծվեին առավել թարմ տվյալներ, ինչպես նաև ներկայացվեին օտարերկրյա ներդրումների ոլորտային ու կառուցվածքային տեղաշարժերը:
3. Ատենախոսության առաջին գիտական նորույթը, ցանկալի էր ներկայացնել առավել կարճ ձևակերպմամբ, մասնավորապես հետևյալ խմբագրությամբ՝ «պետության ու բնական մենաշնորհի սուբյեկտների փոխգործակցության համակողմանի վերլուծության հիման վրա մշակվել է պետության ու բնական մենաշնորհի սուբյեկտների փոխգործակցության նոր կանոններ և կառուցակարգեր»:
4. Ատենախոսության արդյունքային դրույթներն ու վերլուծական նյութն առավել հիմնավոր և արժեքավոր կլինեին, եթե երկարաժամկետ կտրվածքի համար կատարվեին սակագների և արտադրության ու սպառման ծավալների տնտեսաչափական վերլուծություն և գնահատվեր սակագների յուրաքանչյուր միավոր փոփոխության ազդեցության չափը տնային տնտեսությունների և սպառող կազմակերպությունների սպառման ծավալների վրա, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր գնաճի մակարդակի վրա:

### **Եզրակացություն**

Ատենախոսության վերաբերյալ կատարված դիտողությունները չեն անդրադառնում հետազոտության գիտական արժեքի վրա, չեն նսեմացնում ստացված արդյունքների գիտական նշանակությունը և բացասական ազդեցություն չեն թողնում հետազոտության ընդհանուր գնահատականի վրա:

Ատենախոսության հիմնական արդյունքներն ունեն ինչպես տեսական, այնպես էլ կիրառական նշանակություն, այն ավարտուն հետազոտություն է, որտեղ



առաջադրված հիմնախնդիրները, դրանց ուսումնասիրության մեթոդաբանությունը և իրականացված հետազոտությունները կատարված են պատշաճ մակարդակով:

Այսպիսով, Միքայել Էռնեստի Սողոմոնյանի «Բնական մենաշնորհի պետական կարգավորման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է «Հայաստանի Հանրապետության գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 7-րդ կետի, ինչպես նաև՝ թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող Հայաստանի Հանրապետության ԲՈԿ-ի այլ պահանջներին, իսկ հեղինակն արժանի է Ը.00.02 - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մանագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

**Պաշտոնական ընդդիմախոս,**

**տնտեսագիտության թեկնածու, դոցենտ**



**Ի. Զ. Ալեքսանյան**

**26 նոյեմբերի 2020 թվականի**

**Տնտեսագիտության թեկնածու Իլոնա Զավենի Ալեքսանյանի ատենախոսության իսկությունը հաստատում եմ.**

**ՀԱԱՀ գիտ. քարտուղար, գ.գ.թ., դոցենտ**



**Գ. Վ. Բադալյան**